ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ
ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N Ե-12/22

«04» «07» 2022թ.

ք.Երևան

Հարկադիր կատարումն ապահովող ծառայությունն, ի դեմս գլխավոր քարտուղարի պաշտոնակատար Աշոտ Ավագյանի, այսուհետ՝ Պատվիրատու, մի կողմից և ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության «Սեյսմիկ պաշտպանության տարածքային ծառայություն» ՊՈԱԿ-ը, որը հետագայում անվանվում է Կատարող, ի դեմս տնօրեն Ս. Մարգարյանի մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. Պայմանագրի առարկան

1.1. Պատվիրատուն պատվիրում է, իսկ Կատարողն իրականացնում է հետազոտություն և տալիս է եզրակացություն Երևան քաղաքի Նոր-Նորք վարչական շրջանի Թևոսյան փողոց թիվ 4 հասցեում գտնվող շինությունների տեխնիկական վիճակի և վնասվածության աստիճանի գնահատման վերաբերյալ:

2.Կողմերի իրավունքները և պարտականությունները

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1. Կատարողից պահանջել աշխատանքներն իրականացնել սույն պայմանագրով նախատեսված ժամկետների սահմանում:

2.1.2. Կատարողից պահանջել կատարելու սույն պայմանագրի 2.4. կետով նախատեսված պարտականությունները:

2.2. Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1. Ապահովել կատարողի անձնական անվտանգությունը և տրամադրել աշխատանքների կատարման համար անհրաժեշտ հավաստի ելակետային տվյալներ (տեղեկություններ, փաստաթղթեր, նյութեր, հետազոտման ենթակա օբյեկտներ և այլն):

2.2.2. Վճարել աշխատանքի կատարման արժեքը:

2.3. Կատարողն իրավունք ունի՝

2.3.1. Պահանջել աշխատանքի կատարման համար անհրաժեշտ հավաստի ելակետային տվյալների (տեղեկություններ, փաստաթղթեր, նյութեր, հետազոտման ենթակա օբյեկտներ և այլն) տրամադրումը:

2.4. Կատարողը պարտավոր է՝

2.4.1. Աշխատանքը կատարել և եզրակացությունը տրամադրել Պատվիրատուին սույն պայմանագրով սահմանված ժամկետներում:

3.Կատարման ժամկետները

3.1. Աշխատանքների կատարման ժամկետներն են՝
սկիզբը «04» «07» 2022թ., ավարտը «13» «07» 2022թ.:

4. Կատարված աշխատանքի համար վճարման չափը և կարգը

4.1. Սույն պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարման արժեքը կազմում է 120000 (մեկ հարյուր քսան հազար) ՀՀ դրամ, այդ թվում՝ ԱԱՀ:

4.2. Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 4.1 կետով որոշված գումարի վճարումը կատարվում է աշխատանքների արդյունքների ընդունման օրը:

5.Պայմանագրի ուժի մեջ մտնելը և լուծումը

5.1. Սույն պայմանագիրը ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից:

5.2. Պայմանագիրը կարող է ժամկետից շուտ լուծվել Պատվիրատուի պահանջով, որի դեպքում Պատվիրատուն Կատարողին վճարում է սույն պայմանագրի 4.1 կետով որոշված գումարի 50%-ը:

6. Այլ պայմաններ

6.1. Պայմանագիրը կարող է փոփոխվել և լրացվել կողմերի գրավոր համաձայնությամբ, որի վերաբերյալ կազմվում է համաձայնագիր կամ լրացուցիչ պայմանագիր, որը կհանդիսանա սույն պայմանագրի անբաժանելի մասը:

6.2. Սույն պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտականությունները չկատարելու համար պատասխանատվություն են կրում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.3. Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

6.4. Սույն պայմանագիրը կազմվում է հայերեն լեզվով երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

7. Կողմերի վավերապայմանները և ստորագրությունները

Պատվիրատու	Կատարող
Հարկադիր կատարումն ապահովող ծառայություն Ք. Երևան, Հալաբյան 41ա ՀՎՀՀ 01223338 Հ/Հ 900011288025 Կենտրոնական Գանձապետարան Գլխավոր քարտուղարի պաշտոնակատար Ա. ԱՎԱԳՅԱՆ ստորագրություն Կ.Տ.	«ՍՊՏԾ» ՊՈԱԿ Հասցե՝ 0082 ք. Երևան, Ծիծեռնակաբերդի խճուղի 8/1 ՀՀ Ֆինանսների նախարարության գործառնական վարչություն, Հ/Հ 900018003443, ՀՎՀՀ 01224751 ստորագրություն Կ.Տ.